ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.12.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-23/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2015թ. N 73-1/2628-15 գրությամբ ներկայացված «Էկոգրուպ» (ՀՎՀՀ՝ 01008203) և «Միլյոքոնսուլտ» ՍՊ ընկերություններին (կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-23/15 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-23/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 25.12.2015թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը 10.02.2015թ. N 73-1/2628-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Էկոգրուպ» և «Միլյոքոնսուլտ» ՍՊ ընկերություններին (այսուհետ նաև՝ Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 06.02.2015թ. թիվ 01/61-1462 գրության պատճենը:

2. **<u>«Էկոգրուպ» և «Միյոքոնսուլտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 23.02.2015թ. թիվ 09/032-290 գրությամբ դիմել է «Էկոգրուպ» ՍՊԸ-ին:

«Էկոգրուպ» ՍՊԸ-ն նշված գրությանը պատասխան չի ներակայացրել:

Կենտրոնը 19.03.2015թ. թիվ 011/032-488 գրությամբ ծանուցել է «Էկոգրուպ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերի ուսումնասիրման նպատակով 31.03.2015թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկման վերաբերյալ, սակայն վերջինս չի ներկայացել նշված քննարկմանը:

Կենտրոնը 10.06.2015թ. կարծիք ստանալու նպատակով էլեկտրոնային գրությամբ դիմել է «Էկոգրուպ» ՍՊԸ-ին, սակայն վերջինս չի պատասխանել նշված գրությանը:

Բողոքը քննող հանձնաժողովի հոկտեմբերի 8-ի ժամը 17:40-ի նիստի մասին պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նշված նիստին:

3. **<u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

Պատվիրատուն 06.02.2015թ. թիվ 01/61-1462 գրությամբ ներկայացրել է Երևանի քաղաքապետարանի և Ընկերությունների միջև 29.07.2013թ. կնքված «ԵՔ-ՄԵԾՁԲ-12/1» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագրի պատճենը և նշված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցման, ինչպես նաև այն լուծելու համար հիմք հանդիսացած գրությունների պատճենները:

Կենտրոնը 07.12.2015թ. N 01/04.1/3659-15 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով հաշվարկված վնասի, տույժի և տուգանքների գումարներն Ընկերության կողմից վերականգնելու վերաբերյալ՝ առանձին նշելով վերոհիշյալ գումարների չափերը:

Պատվիրատուն 23.12.2015թ. N 02/61-66102Հ գրությամբ հայտնել է, որ Կոնսորցիումի նկատմամբ հաշվարկվել է 316593253 (երեսունմեկ միլիարդ վեց միլիոն հինգ հարյուր իննսուներեք երկու հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ:

4. ՍՑ-ԳԲԽ-23/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 25.12.2015թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2015թ. N 73-1/2628-15 գրությամբ ներկայացված «Էկոգրուպ» (ՀՎՀՀ՝ 01008203) և «Միլյոքոնսուլտ» ՍՊ ընկերություններին (կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 3 տարի ժամկետով:

5. ՍՑ-ԳԲԽ-23/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2015թ. N 73-1/2628-15 գրությամբ «Էկոգրուպ» և «Միլյոքոնսուլտ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «Էկոգրուպ» (ՀՎՀՀ՝ 01008203) և «Միլյոքոնսուլտ» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/ միջև 29.07.2013թ. կնքվել է «ԵՔ-ՄԵԾՁԲ-12/1» ծածկագրով Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման, ներառյալ ձմռան ամիսներին, ծառայությունների գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

2. Պատվիրատուի և Կոնսորցիումի միջև 29.07.2013թ. կնքված Պայմանգրի թիվ 1 հավելվածով՝ ծառայությունների գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրերով, սահմանվել են 3 առանձին տեսակի մատուցվող՝ աղբահանության, սանիտարական մաքրման և ձմեռային պահպանման ծառայություններ:

3. Պայմանագրի թիվ 2 հավելվածով ծառայությունների մատուցան սկիզբ է սահմանվել 01.04.2014թ.:

4. Պատվիրատուն Կոնսորցիումին ուղղված 03.02.2015թ. թիվ 61/234 գրությամբ հայտնել է, որ Կոնսորցիումի կողմից պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման պարտավորությունները չսկսելու հիմքով միակողմանի լուծում է Երևանի քաղաքապետարանի և Կոնսորցիումի միջև 29.07.2013թ. «ԵՔ-ՄԵԾՁԲ-12/1» ծածկագրով Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման, ներառյալ ձմռան ամիսներին, ծառայությունների գնման պայմանագիրը:

5. Պատվիրատուն 23.12.2015թ. N 02/61-66102Հ գրությամբ հայտնել է, որ Կոնսորցիումի նկատմամբ հաշվարկվել է տույժ՝ 316593253 (երեք հարյուր տասնվեց միլիոն հինգ հարյուր իննսուներեք հազար երկու հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ չափով և Ընկերության կողմից միակողմանի սահմանված պայմանագրի ապահովումը՝ 2 420 513 768 (երկու միլիարդ չորս հարյուր քսան միլիոն հինգ հարյուր տասներեք հազար յոթ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամի չափով:

<u>6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Քննելով ՍՑ-ԳԲԽ-23/15 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

Խորհուրդը՝ ուսումնասիրելով Պատվիրատուի 06.02.2015թ. թիվ 01/61-1462 գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի և «Էկոգրուպ» (ՀՎՀՀ՝ 01008203) և «Միլյոքոնսուլտ» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/ միջև 29.07.2013թ. կնքված «ԵՔ-ՄԵԾՁԲ-12/1» ծածկագրով Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման, ներառյալ ձմռան ամիսներին, ծառայությունների գնման պայմանագիրը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու

պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 3 տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ նույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պատվիրատուի և Կոնսորցիումի միջև միջև 29.07.2013թ. կնքված «ԵՔ-ՄԵԾՁԲ-12/1» ծածկագրով գնման պայմանագրով Կոնսորցիումը ստանձնել է Երևան քաղաքի

աղբահանության և սանիտարական մաքրման, ներառյալ ձմռան ամիսներին, ծառայությունների մատուցման պարտականությունները:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի «ա» ենթակետի համաձայն՝ կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված մասնագրերի և թիվ 2 հավելվածով սահմանված պահանջներին:

Պայմանագրի թիվ 1 հավելված՝ ծառայությունների գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրերով տարբեր բաժիններով սահմանվել են 3 առանձին տեսակի մատուցվող ծառայություններ համապատասխանաբար՝

- ✓ աղբահանության (բաժին 2),
- ✓ սանիտարական մաքրման (բաժին 3),
- ✓ ձմեռային պահպանման (բաժին 4),

Միևնույն ժամանակ յուրաքանչյուր բաժնում սահմանվել է ծառայությունների շրջանակ՝ մի շարք տարբեր տեսակի առանձին պարտականություններ:

Պատվիրատուն՝ Պայմանագրային պարտավարությունները Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ժամանակում չսկսելու (01.04.2014) և մինչ լուծման գրությունը չկատարելու հիմքով 03.02.2015թ. թիվ 61/234 գրությամբ միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ավելի քան մեկ անգամ խախտվել են և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը մինչև սույն որոշումը բողոքարկման խորհրդի կողմից ընդունելը Ընկերությունների կողմից չի վերականգնվել (տույժ՝ 316593253 (երեք հարյուր տասնվեց միլիոն հինգ հարյուր իններսուներեք հազար երկու հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ չափով և Ընկերության կողմից միակողմանի սահմանված պայմանագրի ապահովումը՝ 2 420 513 768 (երկու միլիարդ չորս հարյուր քսան միլիոն հինգ հարյուր տասներեք հազար յոթ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամի չափով), Խորհուրդը գտնում է, որ առկա են հիմքեր «Էկոգրուպ» և «Միլյոքնսուլտ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2015թ. N 73-1/2628-15 գրությամբ ներկայացված «Էկոգրուպ» (ՀՎՀՀ՝ 01008203) և «Միլյոքոնսուլտ» ՍՊ ընկերություններին (կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ «Էկոգրուպ» և «Միլյոքոնսուլտ» ՍՊ ընկերություններին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերությունների կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 3 տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Արման Մնացականյան**

Անդամ՝ **Ռուդիկ Օհանյան**